

«Արդար վաստակ ա, տղէք, պէտք է լաւ կուշտ լինել», կ'ըսէ նահապետը դրախտի բոլոր անդամներուն:

«Արդար վաստակ ա»... Բայց չէ՞ որ դրուժներ կան, թշնամի արդարութեան:

«Հասէք, տղէք, հասէք...»

Ողջ դրախտն է կը սասանի...

Չկայ լոյս մը՝ որ չխաւարի:

Յորենի դէգերն են կրակել, դե՛ն է կրակել...»:

*

«Ի՞նչ սասել թէ արդարութիւն կայ, խիղճ կայ, Աստուած կայ...»:

Այսպէս քրթնջելով նահապետ՝ դատարանի դուռն է ափ առեր:

«Կալս են կրակել, զիժներն են կրակել, հալալ դատումն են մոխրել. դատս տեսէք, դարտս լսէք...»:

Բայց դէր դատաւորին մէջ ալ է մտեր: «Թէ՛ յիմար չէիր՝ թող մնայիր արթուն և թոյլ չտայիր: Որ զիժն է կրակել՝ լաւ է ըրեր, թէ չէ՛ պլապէս խելքերնիդ գլուխնիդ չի գար, անհաւատներ: Թէ՛ չկորսուիս շուտով՝ կը պատժուիս չարաչար, զգոյշ: Հանգարտ մարդուն օձը չի խայթեր...»: Կը պատասխանէ յաղթականօրէն արդարութեան պաշտօնեան:

Նահապետը պահ մը կը մնայ քարացած: «Հանգարտ մարդուն օձը չի խայթեր»...:

Բանցաւորը ինքը նահապետն էր, ուրեմն, այն՝ որ իր ամբողջ ընտանիքին անդամներով քարի հետ քաղուե՛ր, մաղի հետ մաղուե՛ր էր՝ պահպանելու համար իր օրհնեալ դրախտը: Իսկ ով որ այրեց տարուան մը աշխատանքի պտուղը մէկ քառորդ ժաւու մէջ՝ իրաւունք ունէր: Անհաւատին ամէն չարիք հասցնել՝ ներելի է՛, սա՛ վնաս է...:

«Ի՞նչ սասել թէ արդարութիւն կայ, խիղճ կայ, Աստուած կայ...»:

Չէ՛ որ սակայն, կայ նա՛ն անիրաւութիւնը, անգթութիւնը, դէ՛ր...:

«Կտուցը քաղցրացրել են...»: Լսելի եղաւ անկիւնէ մը:

«Նահապետը բանտարկել են, դե՛ն է բանտարկել...»: Լուր տարածուեցաւ ողջ գիւղին մէջ:

Ու դեռ ինչե՛ր չէ ըրեր այդ դէր...:

*
*

Կեռպոյզ դեերը, որոնք տխմարօրէն մանկական հոգիս էին սարսափեցուցեր, մեռեր էին արդէն, ինչպէս ըսի: Բայց Մուրառատուրի այս Դևատունը ինչո՛ւ, չգիտեմ, ինձի զգացուց դեերու նոր լէզզոնի մը զոյուրթիւնը: Նոյն իսկ հաւատացի թէ անոնք կան ու կ'ապրին տակաւին — ու թերեւս պիտի ապրին ալ միշտ, աւա՛ղ — պիղծ, ժանտ, ոճրագործ ու արդարադաւ մտքերու մէջ:

Ու դևատունի մօտէն անցած միջոցիս՝ խօսեցայ իւրովի:

Էյ Լուսաւորիչ պապ, երկու յանցանք ես գործեր:

Ի՞նչ պէտք Մ. Կարապետի մի փոշեհան իսկ, որ դու ողջ ես թողեր այդ անիծեալ կապ—դե...:

Աւելի լաւ չէ՞ որ փոխանակ Դեմետրի և Դիսանէի կեռպոյզ դեերուն՝ մարդակերպ բոլոր դեերը կարող ըլլայիր շղթայիլ այս խաւարչտին Տան մէջ յախտենապէս...:

1915 Գոնիա

ԳԱՐԵԴԻՆ ԵՊՈ. ԽԱՅԱՏՈՒՐԵԱՆ

— Ծ. ԲԾ —

ՅՈՎԱԿԻՄ ԿԵՕՐԵՕԿ

(1862-1928)

Այն սակաւաթիւ ճրագներէն էր որ մնացած էին հունգարահայ դասակարգին համար, փայլուն և լոյսզուարթ ճրագ մը՝ մարեցու այս փետրուարին: Յովակիմ Կէօրէօկ, Gyergyós-zentmiklós-ի (այսօրուան անունովը Gheorgheni) ժողովրդապետը՝ մի քանի օրուան հիւանդութենէ վերջ հեռացաւ այս աշխարհէն: Հալածադատութիւն ժամկոչին զաւակն էր նա. հայրը Յովսէփ՝ 50 տարի ժամկոչութիւն ըրած է Sza-

mosújvar-ի (Gerla) հայ եկեղեցիին, մայրն ալ հայունէի մը, Մարիամ Կօզման: Իր քեռորդին՝ Յովսէփ Վաքար, այսօր Csikszépvízi հայ-կաթոլիկ ժողովրդապետն է: Կէօթեօկ իր երկրորդական դպրոցը Սամօշայվարի հայ կիճնազիտին մէջ աւարտելով կ'անցնի Աստուածաբանութեան ընթացքին, որմէ յետոյ Վիեննա Միւլթարեան հայերուն քով տարի մը կը ծնայ և նոյն տեղ կը ձեռնադրուի քահանայ: Վերադառնալով Հունգարիա, Համալսարան կ'անցնի և գիտութեանց կը հետեի. հազիւ 24 տարեկան, 1886-ին ժողովրդապետ կ'ըլլայ Gyergyószentmiklos-ի, ուր կը ծնայ 42 տարի, մինչև իւր մահը. կ'ընդունի կանոնիկոսութեան պատիւ և կը վարէ իբրև տնօրէն իր քաղքին մէջ գտնուող de la misericorde մայրապետներուն հաստատութիւնը: Մի քանի տարի առաջ Ռուման կառավարութիւնը կ'անուանէ զինքը Ժերակուտական և կը հրաւիրուի խորհրդարան:

Ժողովրդապետ էր բառին բուն նշանակութեամբ. հովիւ իր հօտին, հայր իր հաւատացեալներուն, աստուածագէտ և սիրուած ճառախօս մը, որու կը սիրէին ունկնդրել նոյն իսկ ոչ կաթոլիկ տեղացիներն ալ. քաղաքագէտ մ'էր, որ իր հայ սրտին մէջ կը պահէր հունգարական ազգային խոր զգացում մը. միաժամանակ ըմբռնեն ալ անհրաժեշտութիւնը Գրանսիրուանիոյ Ռումանական տիրապետութեան յանձնուելուն և Ռուման կառավարութեան կողմանէ յարգանք և պատիւ ստացաւ. հակառակ որ իր հունգարասէր զգացումները գաղտնի չէր պահեր:

Հունգարիոյ արդի հայութիւնը, (որ ծնացած է առանց հօտի և հովիւի քանի որ իր Ե եկեղեցիները Գրանսիրուանիոյ մէջ ըլլալով, Ռումանիոյ հողին վրայ կը գտնուին ներկայիս) ի

յիշատակ հանգուցեալին փետրուար 27ին Ս. Պատարագ մատուցանել տուաւ Պուտաբեստի մէջ, և մարտ 2ին գումարում մը կազմակերպեց ուր Պր. Աթուր Վաքար պատկերացուց հանգուցեալին գործունէութիւնը իբրև հայ, իբրև հունգար և իբրև կաթոլիկ. իր եկեղեցիին և քաղքին հայ գերազմանաւան գեղեցկութիւնը իր հոգւոյն դաշնակութիւնը կ'ապացուցանէ. իր երգած հայ եկեղեցական երգերուն գեղեցկութիւնը դեռ այսօր ալ կը յիշին Բեշտայի այն հայերը, որ տասնեակ տարիներէ ի վեր հեռացած են իրենց բնավայրէն: — «Ex lacrymis hungarorumque armenorum պիտի բարձրացուի յիշատակ մ'իրեն».

ասոնք էին վերջին խօսքերը բանախօս Վաքարի, որ թողուց խոր պատաւորութիւն ներկայ հունգարահայ ազնուականներուն և բարձրաստիճան կառավարական պաշտօնեաներուն վրայ: 1913ին զրած էի հայերէն նամակ մը հանգուցեալ Տ. Յովակիմ Կէօթեօկին, իմաց տալով որ հայ Բարեգործականի կողմանէ քիչ օրէն այցելութիւն պիտի տրուի Գրանսիրուանիոյ հայ բնավայրերուն: Իսկոյն ընդունեցայ իրմէ հայրական պատասխան մը, որ կը գրէր. «Ուրախ եմ որ կը հանդիպիմ հայու մը, որ հունգարներէնին այսքան տիրացած է և ուրախ պիտի ըլլամ եթէ իմ չարչարեալ հայ ազգիս ձեռն ծառայութիւն մը Բարեգործականին միջոցաւ պիտի կարողանամ ընել, բարի կուգաք, եկէ՛ք օր առաջ»:

Հունգարահայ հօտը ցիր ու ցան եղած, ոչ խարները մեծ մասամբ առանց հովուի են, կըրկնապատիկ կը զգացուի կորուստը այն առաքեալներուն, որոնք անապատին մէջ կը գործեն ազգային և հանրային օգտին համար, և չունին լաւագոյն վարձք մը, քան ժողովուրդին սէրը, յարգանքն և երախտիքը:

ՏՐ. ԵՂՅԱ ՅՈՎԱԿԻՄՅԱՆ

